ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Մաքսային ծառայության կազմակերպումը

1. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնում է Պետական եկամուտների կոմիտեի նախագահը (այսուհետ՝ կոմիտեի ղեկավար):

2. Մաքսային ծառայությունը հիմնվում է աստիճանակարգված ենթակայության սկզբունքի վրա:

3. Մաքսային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, գործում են հրապարակայնորեն՝ ապահովելով պետական, առևտրային և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը:

4. Մաքսային ծառայությունը կազմակերպվում է ռոտացիայի սկզբունքով: Մաքսային մարմինների կամ մաքսային մարմնի ստորաբաժանումների մաքսային ծառայողները տեղափոխվում են մեկ մաքսային մարմնից մյուսը կամ մաքսային մարմնի մի ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում՝ Կառավարության սահմանած կարգով:

Հոդված 7. Մաքսային ծառայության պաշտոններ~~ի~~ դասակարգումը և անվանացանկը

1. Մաքսային ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տեսանկյունից ներկայացվող պահանջներից:

2. Մաքսային ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

1) մաքսային ծառայության բարձրագույն պաշտոններ.

2) մաքսային ծառայության գլխավոր պաշտոններ.

3) մաքսային ծառայության առաջատար պաշտոններ.

4) մաքսային ծառայության կրտսեր պաշտոններ:

3. Մաքսային ծառայության պաշտոնների խմբերում պաշտոնների դասակարգումն իրականացվում է մաքսային ծառայության պաշտոնների անվանացանկով: Անվանացանկը հաստատում և (կամ) փոփոխում է կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարը և վարվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

4. Կոմիտեի~~Մաքսային մարմնի~~ ղեկավարի և նրա տեղակալների պաշտոնները պետական վարչական պաշտոններ են, որոնք չեն ընդգրկվում մաքսային ծառայության պաշտոնների անվանացանկում:

5. Մաքսային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող անձինք համարվում են մաքսային ծառայողներ:

6. Սույն օրենքով մաքսային ծառայողի համար նախատեսված իրավունքները, պարտականությունները և սոցիալական երաշխիքները տարածվում են կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարի և նրա տեղակալների վրա, իսկ սույն օրենքով սահմանված այլ նորմերը կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարի և նրա տեղակալների վրա տարածվում են միայն սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

7. Մաքսային մարմնում՝ ըստ պաշտոնների խմբերի, սահմանվում են մաքսային ծառայության հետևյալ պաշտոնները.

1) մաքսային ծառայության բարձրագույն պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի վարչության պետ.

2) մաքսային ծառայության գլխավոր պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի վարչության պետի տեղակալ.

բ. մաքսային մարմնի բաժնի պետ.

գ. մաքսային մարմնի բաժանմունքի պետ

դ. մաքսային մարմնի բաժնի պետի տեղակալ.

ե. մաքսային մարմնի գլխավոր մաքսային տեսուչ.

3) մաքսային ծառայության առաջատար պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի ավագ մաքսային տեսուչ.

4) մաքսային ծառայության կրտսեր պաշտոններ՝

ա. մաքսային մարմնի մաքսային տեսուչ:

Հոդված 8. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակման պայմանները

1. Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, բարձրագույն կրթություն ունեցող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք՝

1) հաջողությամբ ավարտել են սույն գլխով նախատեսված՝ մաքսային ծառայողի պատրաստման դասընթացը, մաքսային մարմնի ուսումնական կենտրոնի (այսուհետ՝ ուսումնական կենտրոն) կողմից ստացել են հավաստագիր (այսուհետ՝ պատրաստման հավաստագիր) և ընդգրկվել են մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում կամ

2) մաքսային ծառայողներ են և անցել են սույն գլխով նախատեսված մաքսային ծառայողի պատրաստման դասընթացը, ուսումնական կենտրոնի կողմից ստացել են պատրաստման հավաստագիր ~~անհրաժեշտ վերապատրաստում~~ կամ

3) մաքսային ծառայողներ են և սույն օրենքի 15-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով կատարողականի տարեկան գնահատման արդյունքներով ունեն ծառայողական առաջխաղացման իրավունք:

2. Մաքսային ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) մաքսային ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող՝ մաքսային ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ

մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով կոմիտեի ղեկավարի հաստատած փաստաթուղթն է:

3. Մաքսային ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր թափուր պաշտոններ առաջանալու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են պատրաստման հավաստագիր ունեցող՝ մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում ներառված անձանցից կամ մաքսային ծառայողներից կամ ծառայողական առաջխաղացման իրավունք ունեցող մաքսային ծառայողներից՝~~մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում ներառված անձանցից կամ վերապատրաստում անցած մաքսային ծառայողներից~~ հարցազրույցի միջոցով~~, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում~~:

3.1. Մաքսային ծառայության թափուր պաշտոններ առաջանալու դեպքում մինչև սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով պաշտոնները զբաղեցվելը, հաշվի առնելով սույն օրենքի 12-րդ հոդվածով և 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները և «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերը, այդ պաշտոնները կարող են զբաղեցվել տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող՝ մաքսային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով: Ժամկետային աշխատանքային պայմանագիրը կնքվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

3.2. Մաքսային ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում մինչև սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով պաշտոնները զբաղեցվելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այդ պաշտոնում նշանակել մաքսային ծառայության կադրերի ռեզերվից սույն հոդվածի 3.1-ին մասով սահմանված կարգով ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող այն մաքսային ծառայողին, որը մաքսային ծառայության կադրերի ռեզերվում գրանցվել է՝ ազատվելով մաքսային ծառայության պաշտոնից:

3.3. Մաքսային ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնները որոշակի ժամկետով զբաղեցնելու դեպքերը և այդ պաշտոնների զբաղեցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

~~4. Մաքսային մարմնի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրվում են մաքսային մարմնի ղեկավարի սահմանած կարգով և պայմաններով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա: Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթը պարտադիր ներառում է նաև բարեվարքությանը վերաբերող բաղադրիչ:~~

Հոդված 8.1. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելությունը, մաքսային ծառայողի պատրաստումն ուսումնական կենտրոնում

1. Մաքսային ծառայողի պատրաստման նպատակով ~~մաքսային մարմնի~~ ուսումնական կենտրոնը մաքսային մարմնի օժանդակությամբ տարեկան առնվազն 1 անգամ կազմակերպում և անցկացնում է մաքսային ծառայողի, ~~(ըստ անհրաժեշտության նաև այդ թվում՝ ղեկավար պաշտոնների)~~, պատրաստման դասընթացի մասնակցության համար ընդունելություն (այսուհետ՝ ընդունելություն): Սույն մասի իմաստով ղեկավար պաշտոններ են հանդիսանում վարչության պետի, վարչության պետի տեղակալի, բաժնի պետի պաշտոնները:

2. Ընդունելության կարգը հաստատում է կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարը: Ընդունելության կարգով կարգավորվում են նաև ընդունելության հայտարարության հրապարակման, ընդունելության անցկացման պարբերականության, ընդունելության տեղերի սահմանման, ընդունելության դիմումների և կից փաստաթղթերի ներկայացման, թեստավորման և հարցազրույցի անցկացման, հարցազրույցի հանձնաժողովի ձևավորման կարգը, բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացման, բարեվարքության հարցաթերթիկի

ուսումնասիրության և գնահատման մեթոդաբանությունը, ընդունելության արդյունքների ամփոփման, ընդունելության կազմակերպման և անցկացման մաքսային մարմնի և մաքսային մարմնի ենթակայությանը հանձնված կազմակերպության օժանդակության հետ կապված հարաբերությունները:

3. Ընդունելությանը չի կարող մասնակցել այն քաղաքացին, որը չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված՝ տարիքային ցենզի, բարձրագույն կրթության և հայերենին տիրապետելու և 49-րդ հոդվածով սահմանված պահանջները, կամ առկա է «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը կամ ընդունելության մասնակցության դիմումը ներկայացնելու օրվան նախորդող 1 օրացուցային տարվա ընթացքում ստացել է սույն հոդվածի 9-րդ, 14-րդ մասերով կամ սույն օրենքի 8՝3-րդ հոդվածի 7՝1-ին մասով սահմանված հարցազրույցի արդյունքներով բացասական գնահատական:

4. Ընդունելության հայտարարությունը, ի թիվս այլ տեղեկատվության, պետք է պարունակի հետևյալ տվյալները՝

1) ընդունելությանը ներկայացվող պահանջները.

2) ընդունելությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, այդ թվում՝ կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարի հաստատած՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևանմուշը՝

~~3) ընդունելության տեղերի քանակը~~:

~~5. Եթե ընդունելության արդյունքով մասնակիցները հավաքում են հավասար միավորներ, ապա ընդունելության տեղերի քանակը կարող է ավելացվել համապատասխան հավասար միավորներ ստացած մասնակիցների թվով:~~

5~~6~~. Ընդունելությունն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց:

6~~7~~. Թեստավորման պահանջները հաստատում է կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարը, որով սահմանվում են թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձևավորելու պահանջները, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, թեստավորման հաղթահարման համար անհրաժեշտ նվազագույն միավորը:

7~~8~~. Ընդունելության երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարի սահմանած՝ թեստավորման հաղթահարման համար անհրաժեշտ նվազագույն և դրանից բարձր միավորներ ստացած անձինք:

8~~9~~. Հարցազրույցն անցկացնում է կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարի ձևավորած հանձնաժողովը:

9~~10~~. Հարցազրույցի կազմակերպման համար ձևավորված հանձնաժողովը դիմողների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը հաշվի է առնում ընդունելության հարցազրույցի փուլը հաղթահարած մասնակիցներին որոշելու համար: Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնելու փաստի ուժով անձը տալիս է իր համաձայնությունը մաքսային մարմնի կողմից բարեվարքության հարցաթերթիկի ուսումնասիրության շրջանակում պետական մարմիններից և այլ անձանցից բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկով ներկայացված տեղեկությունները հավաստող տեղեկատվություն պահանջելու և ստանալու վերաբերյալ: Հարցազրույցի արդյունքներով մասնակիցը ստանում է դրական կամ բացասական գնահատական:

10~~11~~. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի կազմակերպման կարգը, այդ թվում՝ դասընթացի բովանդակությունը, տևողությունը, ~~դրա ընթացքում քննությունների և ավարտական~~ ամփոփիչ քննության կազմակերպման, այդ թվում՝ ~~ավարտական~~ քննական հանձնաժողովի կազմավորման կարգը, դասընթացի արդյունքներն ամփոփելու, դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու չափանիշները սահմանում է կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարը: Դասընթացը պետք է պարունակի նաև բարեվարքությանը վերաբերող կրթական բաղադրիչ:

11~~12~~. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի արդյունքներն ամփոփելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում դասընթացը հաջողությամբ հաղթահարած անձանց ուսումնական կենտրոնը էլեկտրոնային եղանակով տրամադրում է պատրաստման ~~դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու~~ հավաստագիր (ղեկավար պաշտոնների դեպքում՝ ղեկավար պաշտոնի հավաստագիր), որը գործում է երեք տարի ժամկետով և

որի ձևը հաստատում է կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարը: Եթե պատրաստման հավաստագրի գործողության ավարտին նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում ուսումնական կենտրոնի կողմից պատրաստման դասընթաց չի անցկացվել, ապա պատրաստման հավաստագրի գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև պատրաստման հավաստագրի գործողության վերջնաժամկետից հետո կազմակերպված պատրաստման դասընթացի արդյունքում պատրաստման հավաստագիր տրամադրելու օրը, իսկ պատրաստման դասընթացը չհաղթահարելու դեպքում՝ մինչև պատրաստման դասընթացը չհաղթահարելու օրը:

12. Ուսումնական կենտրոնում վերջին երկու տարվա ընթացքում 60 ակադեմիական դասաժամ դասավանդած մաքսային ծառայողները մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության թեստավորման և հարցազրույցի փուլերը հաղթահարելու դեպքում համարվում են մաքսային ծառայության պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած և ստանում են զբաղեցրած պաշտոնին համապատասխանող պատրաստման հավաստագիր:

13. Ծառայողական առաջխաղացման հիմքով մաքսային ծառայության պաշտոնի (այդ թվում՝ ղեկավար) նշանակվելիս մաքսային ծառայողի պատրաստման հավաստագրի գործողությունը շարունակվում է մինչև պատրաստման հավաստագրի գործողության՝ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ժամկետի ավարտը: Ծառայողական առաջխաղացման արդյունքում զբաղեցրած պաշտոնին համապատասխան պատրաստման հավաստագրի ստացումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

14. Պատրաստման հավաստագիր ստանալուց հետո մինչև պաշտոնի նշանակումը բարեվարքության հարցաթերթիկով ներկայացված՝ կոմիտեի ղեկավարի կողմից սահմանած տվյալների մասով փոփոխության վերաբերյալ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կամ այլ տեղեկատվություն ստանալու դեպքում կոմիտեի ղեկավարի պատճառաբանված հրամանով կարող է անցկացվել նոր հարցազրույց: Հարցազրույցն անցկացնում է կոմիտեի ղեկավարի ձևավորած հանձնաժողովը, որի կազմում ներառվում են նաև

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ: Սույն մասով նախատեսված հարցազրույցի անցկացման նպատակով պատրաստման հավաստագիր ստացած անձը սույն մասով նախատեսված հրամանով սահմանված ժամկետում ներկայացնում է սույն օրենքի 8⁄1-ին հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված ձևանմուշի բարեվարքության վերաբերյալ նոր հարցաթերթիկ, որի ուսումնասիրությունը կատարվում է սույն օրենքի 8⁄1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Հարցազրույցի արդյունքներով պատրաստման հավաստագիր ստացած անձը ստանում է դրական կամ բացասական գնահատական: Հարցազրույցի արդյունքում բացասական գնահատական ստանալու հիմքով պատրաստման հավաստագրի գործողությունը դադարում է:

15~~13~~. Կոմիտեի~~Մաքսային մարմնի~~ ղեկավարի սահմանած կարգով մաքսային ծառայողի պատրաստում կարող է անցկացվել նաև առանձին պաշտոններ զբաղեցնելու համար:

Հոդված 8.2. Մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակը

1. Մաքսային ծառայողի պատրաստման դասընթացը հաջողությամբ հաղթահարած համարվելու հավաստագիր ունեցող անձինք (բացառությամբ մաքսային ծառայողների) ընդգրկվում են մաքսային մարմնի կողմից վարվող մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակներում՝ ըստ սույն օրենքի 8⁄1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված պաշտոնների համար անցկացվող ընդունելության տեսակների՝ դասընթացի ավարտին իրենց կողմից առավել բարձրից ցածր միավորներ հավաքելու սկզբունքից ելնելով: Ընդ որում, սույն օրենքի 8.3-րդ հոդվածով նախատեսված կարգով պաշտոնի նշանակումը, ինչպես նաև սույն օրենքի 8⁄1-ին հոդվածի 14-րդ մասով սահմանված հարցազրույցի արդյունքում բացասական գնահատական ստանալը հիմք ~~չ~~է անձին ցուցակից հանելու համար:

2. Մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում ընդգրկելու, ցուցակներից հանելու և ցուցակների վարման կարգը հաստատում է Կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարը:

3. Մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում միանգամյա ընդգրկված լինելու առավելագույն ժամկետը երեք տարի է: Ցուցակում ընդգրկված լինելու առավելագույն ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը թեկնածուն ինքնաշխատ եղանակով հանվում է ցուցակից: Մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակի թափուր համարները լրացվում են հաջորդաբար՝ նվազման կարգով՝ ինքնաշխատ եղանակով:

Հոդված 8.3. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակումը

1. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակումն իրականացվում է մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակներում ներառված անձանցից և պատրաստման հավաստագիր ունեցող մաքսային ծառայողներից, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման իրավունք ունեցող մաքսային ծառայողներից ~~վերապատրաստում անցած անձանցից~~՝ սույն հոդվածով նախատեսված հարցազրույցի միջոցով՝ ըստ համապատասխան պաշտոնների ցանկի:

2. Հարցազրույցի հրավիրվում են՝

1) մաքսային ծառայողների՝ համապատասխան պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված, մաքսային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող հինգ ամենաբարձր միավորներ ունեցող անձինք: Եթե սույն կետի պահանջները բավարարող անձինք հրաժարվում են մասնակցել հարցազրույցին, ապա հարցազրույցի հրավիրվում են հաջորդաբար ավելի բարձր միավորներ ունեցող անձինք.

2) պաշտոնին համապատասխան պատրաստման գործող հավաստագիր ունեցողներ~~վերապատրաստում (այդ թվում՝ առաջխաղացման նպատակով) անցած~~ և տվյալ պաշտոնում նշանակվելու համար դիմում ներկայացրած մաքսային ծառայողները~~անձինք.~~

3) սույն օրենքի 15-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով կատարողականի տարեկան գնահատման արդյունքներով ծառայողական առաջխաղացման իրավունք ունեցող և տվյալ պաշտոնում նշանակվելու համար դիմում ներկայացրած մաքսային ծառայողները:

2.1. Հարցազրույցն անցկացվում է, եթե հարցազրույցին մասնակցում է առնվազն մեկ անձ:

3. Հարցազրույցի անցկացման նպատակով ձևավորվում է հանձնաժողով: Հարցազրույցին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան:

4. Հարցազրույցի նպատակն է մաքսային ծառայողի պաշտոնում արդյունավետ գործելու համար մաքսային ծառայողի թեկնածուի անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտելը: Անհրաժեշտ հմտություններն ու որակները բացահայտվում են թեկնածուի մասնագիտական աշխատանքի փորձառությունը, մաքսային ծառայող դառնալու շարժառիթն ու ակնկալիքը, մաքսային ծառայությանը վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, բարեվարքություն, վարվեցողություն, պատասխանատվության զգացում, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և մաքսային ծառայողի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշներ) գնահատելու միջոցով:

5. Հարցազրույցից առաջ հարցազրույցի հանձնաժողովի որոշմամբ հարցազրույցի հրավիրված թեկնածուները կարող են անցնել հոգեբանական թեստավորում: Հոգեբանական թեստը կազմվում է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հատկանիշները գնահատելու նպատակով, և դրա արդյունքն ստացվում է ըստ նախապես մշակված էլեկտրոնային համակարգի: Կոմիտեի~~Մաքսային մարմնի~~ ղեկավարը հաստատում է հոգեբանական թեստավորման չափանիշները, անցկացման կարգը և ապահովում է թեստավորման անցկացման համար անհրաժեշտ պայմանները: Թեստի արդյունքներն ունեն խորհրդատվական նշանակություն, տրամադրվում են թեկնածուին և հանձնաժողովին:

6. Հարցազրույցի փուլը հաղթահարում է մեկ մասնակից: Հարցազրույցի արդյունքով հանձնաժողովը կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարին է

ներկայացնում եզրակացություն հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ՝ նշելով հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին:

7. Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարը հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի:

7⁄1. Հարցազրույցի փուլը հաղթահարելուց և պաշտոնի նշանակվելուց հետո բարեվարքության հարցաթերթիկով ներկայացված կոմիտեի ղեկավարի կողմից սահմանած տվյալների մասով փոփոխության վերաբերյալ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կամ այլ տեղեկատվություն ստանալու դեպքում կոմիտեի ղեկավարի պատճառաբանված հրամանով կարող է անցկացվել նոր հարցազրույց: Հարցազրույցն անցկացնում է կոմիտեի ղեկավարի ձևավորած հանձնաժողովը, որի կազմում ներառվում են նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ: Սույն մասով նախատեսված հարցազրույցի անցկացման նպատակով պաշտոնի նշանակված մաքսային ծառայողը սույն մասով նախատեսված հրամանով սահմանված ժամկետում ներկայացնում է սույն օրենքի 8⁄1-ին հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված ձևանմուշի բարեվարքության վերաբերյալ նոր հարցաթերթիկ, որի ուսումնասիրությունը կատարվում է սույն օրենքի 8⁄1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Հարցազրույցի արդյունքներով ծառայողը ստանում է դրական կամ բացասական գնահատան: Դրական գնահատական ստանալու դեպքում մաքսային ծառայողը շարունակում է պաշտոնավարումը, իսկ բացասական գնահատական ստանալը հիմք է ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու համար:

8. Հարցազրույցի կազմակերպման և անցկացման կարգը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը, ինչպես նաև հարցազրույցի հանձնաժողովի կազմը հաստատում է կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարը:

9. Մաքսային ծառայության պաշտոններում պաշտոնի նշանակում և պաշտոններից ազատում է կոմիտեի~~մաքսային մարմնի~~ ղեկավարը:

10. Մաքսային ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձը պաշտոնի նշանակվում է մինչև ինն ամիս փորձաշրջանով: Մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված Փփորձաշրջանի հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ փորձաշրջանի արդյունքներով գնահատման, փորձաշրջանը չանցած համարվելու դեպքում լիազորությունների դադարեցման կարգը սահմանում է կոմիտեի ղեկավարը~~կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով~~:

Հոդվա ծ 15. Մաքսային ծառայողների կատարողականի գնահատումը, վերապատրաստումը

1. Մաքսային ծառայողների կատարողականի գնահատման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, իսկ մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման հարաբերությունները կարգավորվում են սույն հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով:

2. Մաքսային բոլոր ծառայողները ~~մաքսային մարմնի~~կոմիտեի ղեկավարի սահմանած կարգով ենթակա են պարտադիր վերապատրաստման ոչ ուշ, քան ~~3~~ տարին մեկ անգամ:

~~3. Մաքսային ծառայողների առաջխաղացման նպատակով մաքսային մարմնի ղեկավարի սահմանած կարգով կարող են կազմակերպվել նաև մաքսային ծառայողի պաշտոնի խմբի համար կամ կառուցվածքային ստորաբաժանման առանձնահատկություններով պայմանավորված վերապատրաստման դասընթացներ, որոնք հաջողությամբ ավարտելու դեպքում կարող են հիմք հանդիսանալ մաքսային ծառայողի ծառայողական առաջխաղացման համար՝ սույն օրենքի 8.3-րդ հոդվածով սահմանված հարցազրույցի միջոցով նշանակում կատարելու համար: Ընդ որում, սույն մասով նախատեսված վերապատրաստումը հաջողությամբ ավարտելու հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ նաև մաքսային ծառայողին մաքսային ծառայության մեկ այլ հավասարազոր պաշտոնի նշանակման համար:~~

4. Սույն հոդվածի 2-րդ մասով~~ և 3-րդ մասերով~~ նախատեսված վերապատրաստման ծրագրերի բովանդակությանը ներկայացվող պահանջները կարող են տարանջատվել ըստ մաքսային ծառայության պաշտոնների խմբերի և կառուցվածքային ստորաբաժանումների:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով~~ և 3-րդ մասերով~~ նախատեսված վերապատրաստման ծրագրերը պետք է պարունակեն բարեվարքության համակարգին վերաբերող կրթական բաղադրիչ՝ ըստ մաքսային ծառայության պաշտոնների խմբերի:

6. Սույն հոդվածի 2-րդ մասով~~ և 3-րդ մասերով~~ նախատեսված վերապատրաստման ծրագրերի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանում է ~~մաքսային մարմնի~~կոմիտեի ղեկավարը:

~~7. Վերապատրաստման ծրագիրը (այդ թվում՝ առաջխաղացման) հաջողությամբ ավարտելու դեպքում մաքսային մարմնի ուսումնական կենտրոնը էլեկտրոնային եղանակով տրամադրում է ծրագիրը հաջողությամբ ավարտելու հավաստագիր, որը գործում է երեք տարի ժամկետով:~~

7.1. Մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված մաքսային ծառայողի կատարողականի գնահատումն իրականացվում է առնվազն տարին երկու անգամ: Սույն մասով նախատեսված մաքսային ծառայողի կատարողականի գնահատականը մաքսային ծառայողի կատարողականի հիմնական ցուցանիշների վրա հիմնված, ինչպես նաև մաքսային մարմնի ղեկավար կազմի որակական գնահատականի համակցված վերլուծությունն է, որի հիման վրա մաքսային ծառայողին տրվում է գնահատական: Մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման կարգը, գնահատականները, գնահատականների ազդեցությունը հավելավճարի հատկացման, մաքսային ծառայողի իրավական կարգավիճակի, այդ թվում՝ աշխատանքից ազատման, առաջխաղացման վրա սահմանում է կոմիտեի ղեկավարը: Սույն մասով սահմանված կարգով կատարողականի տարեկան գնահատման արդյունքներով կոմիտեի ղեկավարի սահմանած միջինից բարձր միավոր ստանալու դեպքում մաքսային ծառայողն

իրավունք ունի ծառայողական առաջխաղացման: Կատարողականի գնահատման արդյունքներով տարեկան երկու անգամ անընդմեջ կոմիտեի ղեկավարի սահմանած նվազագույնից ցածր միավոր ստանալը հիմք է մաքսային ծառայողին ծառայությունից ազատելու համար:

Հոդված 17.1. Ուսումնական կենտրոնը

1. ~~Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի ո~~Ուսումնական կենտրոնի ~~(այսուհետ՝ Ուսումնական կենտրոն)~~ գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

2. Ուսումնական կենտրոնը, սույն օրենքին և իր կանոնադրության նպատակներին համապատասխան, կազմակերպում է՝

1) մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց ~~մասնագիտական~~ վերապատրաստումը~~ (այդ թվում՝ առաջխաղացման նպատակով վերապատրաստումը)~~.

2) մաքսային ծառայության առանձին պաշտոններ զբաղեցնելու համար մաքսային ծառայողների պատրաստումը.

3) մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի իրականացումը.

4) օրենքով նախատեսված հատուկ և այլ միջոցների ~~և հրազենի~~ գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով ուսուցումը.

5) այլ մասնագիտացված դասընթացներ և կրթական ծրագրեր:

3. Ուսումնական կենտրոնը, այդ թվում՝ մաքսային ծառայողների պատրաստումներն ու վերապատրաստումները ֆինանսավորվում են պետական բյուջեից, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

ՀՈԴՎԱԾ 18. ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայողների համար սահմանվում են հետևյալ հատուկ կոչումները.

մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտ,

մաքսային ծառայության գեներալ-մայոր,

մաքսային ծառայության գնդապետ,

մաքսային ծառայության փոխգնդապետ,

մաքսային ծառայության մայոր,

մաքսային ծառայության կապիտան,

մաքսային ծառայության ավագ լեյտենանտ,

մաքսային ծառայության լեյտենանտ,

մաքսային ծառայության կրտսեր լեյտենանտ:

2. Մաքսային ծառայողներին ըստ զբաղեցրած պաշտոնի հասանելիք առավելագույն հատուկ կոչումները սահմանում է Կառավարությունը:

3. Առաջին անգամ մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնող անձին հատուկ կոչում շնորհվում է սույն օրենքով նախատեսված փորձաշրջանի ավարտից հետո՝ կոմիտեի ղեկավարի հրամանով:

4. Մաքսային ծառայողը հատուկ կոչումից զրկվում է զբաղեցրած պաշտոնից սույն օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի 8-րդ, 10-12-րդ և 15-րդ կետերով նախատեսված հիմքերով ազատվելու դեպքերում:

5. Մաքսային ծառայության բարձրագույն կոչումներն օրենքով սահմանված կարգով շնորհվում են նաև ~~մաքսային մարմնի~~կոմիտեի ղեկավարին և նրա տեղակալներին:

6. Մաքսային ծառայության ժամանակավոր թափուր և թափուր պաշտոնները որոշակի ժամկետով զբաղեցնող անձանց համար չեն սահմանվում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հատուկ կոչումները:

Հոդվա Մաքսային ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի վերծ 22՝1. ակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության ժամանակ

1. Համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կառուցվածքային փոփոխության դեպքում մաքսային ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝

~~1) մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության թեստավորման կամ հարցազրույցի փուլը չհաղթահարելը՝~~

~~2) դասընթացը հաջողությամբ հաղթահարած չհամարվելու արդյունքով մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակներում չներառվելը։~~

3) մաքսային ծառայության պաշտոնի՝ սույն օրենքի 8.3~~2~~-րդ հոդվածով սահմանված կարգով չնշանակվելը։

~~4) վերապատրաստման ծրագրին երկու անգամ անընդմեջ չմասնակցելը կամ վերապատրաստման արդյունքով երկու անգամ անընդմեջ վերապատրաստման ծրագիրը հաջողությամբ ավարտելու հավաստագիր չստանալը.~~

5) հաստիքների կրճատումը:

~~2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված պաշտոնից ազատման հիմքերը կիրառելի են միայն կառուցվածքային փոփոխության ենթարկվող ստորաբաժանումների մաքսային ծառայողների պաշտոնից ազատման հարաբերությունների նկատմամբ:~~

3. Մաքսային ծառայողին պաշտոնից ազատելու հիմք է նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական մարմնի վերակազմակերպումը, եթե այն ուղեկցվում է հաստիքների կրճատմամբ, կամ գործունեության դադարեցումը:

4. Մաքսային ծառայողները մաքսային ծառայողի պատրաստման դասընթացին և վերապատրաստմանը մասնակցելու դեպքում դասընթացին մասնակցության ամբողջ ժամանակահատվածում պահպանում են իրենց աշխատատեղը և հիմնական աշխատավարձը:

ՀՈԴՎԱԾ 26. ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺԻ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ԶԵՆՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ և ԿԱՐԳԸ

1. Մաքսային մարմնի հանրային ծառայողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ, կիրառելու հատուկ միջոցներ, ինչպես նաև հրազեն՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Նախքան ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման իրավասություն ստանալը, այնուհետև՝ պարբերաբար, մաքսային մարմնի հանրային ծառայողները, կոմիտեի սահմանած

կարգով անցնում են հատուկ պատրաստություն և պիտանիության ստուգումներ: Նշված անձինք պարտավոր են ունենալ նաև տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն:

2. Սույն օրենքի 27-29-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում և կարգով՝ մաքսային մարմնի հանրային ծառայողն իրավունք ունի կիրառել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք:

3. Մաքսային մարմնի հանրային ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելուց առաջ նախազգուշացնում է այդ մտադրության մասին՝ տալով իր պահանջները կատարելու համար բավարար ժամանակ, բացառությամբ անակնկալ, զինված, ռազմական տեխնիկայի և տրանսպորտային այլ միջոցների օգտագործմամբ հարձակումների և այլ իրադրությունների, եթե նման նախազգուշացումն ստեղծված իրավիճակում անտեղի է, անհնարին կամ կարող է առաջացնել վտանգ իր կամ այլ անձանց կյանքին և առողջությանը, հանգեցնել այլ ծանր հետևանքների:

4. Իրավախախտման վտանգավորության աստիճանից և դա կատարող անձի ինքնությունից, ինչպես նաև դիմադրության ուժից ելնելով՝ վտանգի վերացմանն ուղղված գործողությունների հետևանքով հնարավոր վնասները մաքսային մարմնի հանրային ծառայողը պետք է հասցնի նվազագույնի:

5. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման դեպքում մաքսային մարմնի հանրային ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով, իսկ զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին՝ նաև դատախազին:

Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին ~~մաքսային մարմնի~~կոմիտեի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության համապատասխան մարմնին և իրավասու դատախազին:

ՀՈԴՎԱԾ 28. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

1. Մաքսային մարմնի հանրային ծառայողներն իրավունք ունեն կիրառել ձեռնաշղթաներ, ռետինե մահակներ, արցունքաբեր նյութեր, փականքները բացելու գործիքներ, տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու համար նախատեսված միջոցներ, էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ, ծառայողական շներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ:

2. Իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս մաքսային մարմնի հանրային ծառայողները հատուկ միջոցներ կարող են կիրառել՝

1) իրենց և (կամ) այլ անձանց վրա կատարված հարձակումը կանխելու համար.

2) մաքսային մարմնին պատկանող կամ նրա հսկողության տակ գտնվող շինությունների, կառույցների և տրանսպորտային միջոցների վրա կատարված հարձակումը կանխելու համար.

3) իրենց գործառույթների իրականացումը խոչընդոտող իրավախախտին վարչական ձերբակալության ենթարկելու կամ մաքսային մարմնի շենք կամ դրան փոխարինող այլ շինություն հասցնելու համար, եթե այդ դիմադրությունը կարող է վնաս պատճառել շրջապատին կամ իրենց.

4) տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար, եթե դրա վարորդը չի կատարում մաքսային ծառայողի օրինական պահանջները:

2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերից բացի, մաքսային մարմնի հանրային ծառայողները ծառայողական շներ կարող են կիրառել նաև՝

1) մաքսային հսկողության իրականացման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից ապօրինի արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ.

2) ապացուցողական գործողությունների, գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ:

2.2. Ծառայողական շների կիրառման, վարժեցման և պահման կարգը հաստատվում է ~~մաքսային մարմնի~~կոմիտեի ղեկավարի հրամանով:

3. Հղիության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց, անչափահասների նկատմամբ հատուկ միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ նշված անձանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, խմբակային կամ այլ հարձակումների, մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր գործողությունների դեպքերի:

Հոդված 43. Մաքսային ծառայողների խրախուսումը

1. Մաքսային ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, ինչպես նաև սույն օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները: Մաքսային ծառայողների նկատմամբ խրախուսանք կիրառում է ~~մաքսային մարմնի~~կոմիտեի ղեկավարը:

2. Մաքսային ծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև արտահերթ կոչման շնորհում խրախուսանքի տեսակը, որը մաքսային ծառայողների նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել միայն մեկ անգամ: Արտահերթ կոչման շնորհում խրախուսանքի տեսակը կիրառում է նման կոչում շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. Երկարամյա ծառայության և (կամ) ծառայողական պարտականությունները և (կամ) հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար մաքսային ծառայողը պարգևատրվում է մեդալով կամ կրծքանշանով:

4. Մեդալի և կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

~~5. Մաքսային ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:~~

ՀՈԴՎԱԾ 44. Մաքսային ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով մաքսային ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

2. Մաքսային ծառայողի նկատմամբ կարող է կիրառվել նաև կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը՝ ծառայության ամբողջ ընթացքում միայն մեկ անգամ՝ կոչումը շնորհած պաշտոնատար անձի կողմից:

3. Մաքսային ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը: ~~Մաքսային մարմնի~~Կոմիտեի ղեկավարի հրամանով որոշ կարգապահական տույժերի նշանակման լիազորությունը կարող է պատվիրակվել այլ պաշտոնատար անձանց:

Հոդված 46. Կոմիտեի ծառայողական քննության հանձնաժողովը

1. Կոմիտեի ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովը, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով, անցկացնում է ծառայողական քննություններ և դրանց արդյունքների վերաբերյալ կոմիտեի ղեկավարին ներկայացնում է եզրակացություններ:

1[1]. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

2. Կոմիտեի ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է կոմիտեի ղեկավարը՝ Կառավարության սահմանած կարգով՝ հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի հաստատած հանձնաժողովի անդամության ~~առաջարկված թեկնածուներից~~թեկնածուների ցուցակից:

ՀՈԴՎԱԾ 47. ~~ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ~~ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կարգապահության համար պատասխանատու են՝

1) կոմիտեում՝ ղեկավարը, ղեկավարի տեղակալները և ստորաբաժանումների ղեկավարները.

2) մաքսատներում՝ մաքսատան պետը, նրա տեղակալը (տեղակալները) և ստորաբաժանումների ղեկավարները.

3) մաքսային կետերում՝ մաքսակետի պետը, նրա տեղակալը և ստորաբաժանումների ղեկավարները:

Մաքսային մարմնի և նրա ստորաբաժանումների ղեկավարները պարտավոր են՝

1) ենթակաների համար ստեղծել ծառայության հանգստի համար անհրաժեշտ պայմաններ.

2) ենթակաների մոտ դաստիարակել պատասխանատվության զգացում ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ.

3) ենթակաների ծառայողական գործունեությունը վերադասի մոտ գնահատելիս լինել օբյեկտիվ և ապահովել անհրաժեշտ հրապարակայնություն.

4) բացառել հովանավորչությունն անձնակազմի հետ աշխատելիս.

5) բացառել մաքսային ծառայողի հետապնդումներն անձնական բնույթի շարժառիթներով կամ տվյալ ծառայությունում առկա թերությունների վերաբերյալ արտահայտած քննադատության համար.

6) հետամուտ լինել իրենց ենթակաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Մաքսային մարմինների ղեկավարները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն ենթակաների անհատական հատկանիշների ուսումնասիրմանը, սույն օրենքով սահմանված փոխհարաբերությունների պահպանմանը, անձնակազմի համախմբմանը, ժամանակին հայտնաբերեն ենթակաների կատարած զանցանքների պատճառները, նախազգուշացնեն նրանց, կարգազանցների նկատմամբ դրսևորեն անհանդուրժողական վերաբերմունք:

Հոդված 48. Մաքսային ծառայության պաշտոնից ազատելու հիմքերը

1. Մաքսային ծառայողի ծառայությունը դադարում է մաքսային ծառայողի ծառայությունից ազատվելու (ազատելու) կամ նրա զոհվելու (մահանալու) դեպքում:

2. Մաքսային ծառայողին ծառայությունից ազատելու հիմքերն են՝

1) անձնական դիմումը.

2) մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված մաքսային ծառայության առավելագույն տարիքի լրանալը.

3) ***(կետն ուժը կորցրել է 24.12.04 ՀՕ-71-Ն)***

4) հաստիքների կրճատումը կամ մաքսային մարմնի լուծարումը.

4.1) սույն օրենքի 22.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերը.

4.2) սույն օրենքի 8.3-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված հարցազրույցի արդյունքում բացասական գնահատական ստանալը.

4.3) պատրաստման գործող հավաստագիր չունենալը.

4.4) մաքսային ծառայողի գործառութային առանձնահատկություններով պայմանավորված կատարողականի գնահատման արդյունքներով տարեկան երկու անգամ անընդմեջ կոմիտեի ղեկավարի սահմանած նվազագույնից ցածր միավոր ստանալը.

5) պետական այլ մարմնում աշխատանքի տեղափոխվելը.

6) հանրային պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը.

7) Կառավարության հաստատած՝ մաքսային ծառայության պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկում ընդգրկված որևէ հիվանդությամբ տառապելը.~~մաքսային ծառայողի առողջական վիճակի կապակցությամբ՝ մաքսային ծառայության համար պիտանիությունը սահմանափակող Հայաստանի Հանրապետության ներքին գործերի հանրապետական մարմնի ռազմաբժշկական հանձնաժողովի տված եզրակացությունը.~~

8) մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու՝ սույն օրենքով սահմանված կարգը խախտելը.

~~9) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում~~.

9.1) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.

10) ծառայողական կարգապահական կանոնները միանգամյա կոպիտ խախտելը կամ ծառայողական կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը:

Ծառայողական կարգապահական և վարքագծի (էթիկայի) կանոնների միանգամյա կոպիտ խախտումներ են՝

1) օրենսդրության պահանջների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, եթե դրա արդյունքում տեղի է ունեցել մաքսային վճարների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա գումարների ավելի կամ թերի հաշվարկում (առաջադրում) 1.000.000 դրամից ավելի.

2) պետական, բանկային, առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները հրապարակելը, անձնական նպատակներով օգտագործելը, երրորդ անձանց տրամադրելը, եթե դրանց տրամադրումը նախատեսված չէ օրենքով.

3) առանց հարգելի պատճառների գործալքությունը (այդ թվում՝ աշխատանքային օրվա ընթացքում ավելի քան երեք ժամ աշխատանքից բացակայելը).

4) ոչ սթափ վիճակում, թմրամիջոցներ կամ թունամիջոցներ օգտագործած վիճակում աշխատանքի ներկայանալը.

5) աշխատանքի վայրում գույք հափշտակելը (այդ թվում՝ մանր), անհիմն ծախսեր կատարելը, գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը հաստատվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով.

6) աշխատողի կողմից աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը, եթե այդ խախտումն առաջացրել է կամ կարող էր առաջացնել մարդկանց հետ դժբախտ դեպքեր կամ այլ ծանր հետևանքներ.

7) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու

դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում կամ կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում.

8) ~~կոմիտեի տարածաշրջանային մաքսատան~~մաքսային մարմնի ~~ղեկավարի~~ վարչության պետի կամ տեղակալի, ~~մաքսային կետի~~ բաժնի պետի կամ տեղակալի, ~~գլխավոր հաշվապահի~~ կողմից անհիմն որոշում ընդունելը, եթե դա հանգեցրել է ~~մաքսատան կամ մաքսային կետի~~մաքսային մարմնի ~~-~~գույքի անիրավաչափ օգտագործման, գույքի ամբողջականության խախտման կամ այլ վնասի:

Ծառայողական կարգապահական և վարքագծի (էթիկայի) կանոնների պարբերաբար խախտող է համարվում ծառայողական կարգապահության խախտման համար կարգապահական տույժ ստացած այն ծառայողը, ով կրկին խախտել է դա:

Եթե մեկ տարվա ընթացքում մաքսային ծառայողի նկատմամբ կիրառվել է կարգապահական երեք տույժ, ապա մաքսային ծառայողն ազատվում է պաշտոնից:

11) ազատազրկման դատապարտվելը.

12) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.

13) օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելը.

14) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը.

15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.

16) մաքսային ծառայողի՝ զինվորական ծառայության զորակոչվելը.

17) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով աշխատանքի չներկայանալն ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր:

18) ***(կետն ուժը կորցրել է 29.11.11 ՀՕ-297-Ն)***

3. Մաքսային ծառայողին պաշտոնից ազատում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

4. Մաքսային ծառայողն ամենամյա հերթական արձակուրդում գտնվելու կամ հիվանդության ժամանակահատվածում չի կարող ազատվել զբաղեցրած պաշտոնից, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասի 7-րդ կետում նշված դեպքի:

5. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու մաքսային ծառայողի լիազորությունները:

6. Սույն հոդվածի երկրորդ մասի 7-րդ կետում նշված հիմքով մաքսային ծառայողն ազատվում է ծառայությունից, եթե հնարավոր չէ նրան տեղափոխել առողջական վիճակին համապատասխան այլ ազատ պաշտոնի, կամ եթե տվյալ ծառայողը հրաժարվել է տեղափոխվել այդ պաշտոնին:

~~7. Հաստիքների կրճատման հետևանքով ծառայությունից առաջիկա ազատման վերաբերյալ մաքսային ծառայողը պետք է տեղեկացվի ազատվելուց առնվազն երկու ամիս առաջ:~~

8. Մաքսային ծառայությունից ազատվելու դեպքում մաքսային ծառայողը կոմիտե է հանձնում իր ծառայողական վկայականը, իրեն ամրագրված կնիքը, զենքը և պաշտոնեական պարտականությունների կատարման հետ կապված այլ միջոցներ:

9. Սույն հոդվածի երկրորդ մասի 4-րդ, 4"3-րդ և 17-րդ կետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատվել չեն կարող հղի և մինչև երեք տարեկան երեխա խնամող մաքսային ծառայողները և ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնողները:

Հոդված 49. Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը

1. Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է: Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը

լրանալուն նախորդող վեց ամսվա ընթացքում գործող պատրաստման հավաստագրի առկայությունը պարտադիր չէ:

2. Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում, մաքսային ծառայողի ցանկությամբ և տվյալ պաշտոնում նշանակում կատարելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ, մաքսային ծառայողը կարող է մինչև մեկ տարի ժամկետով զբաղեցնել մաքսային ծառայության պաշտոն, ինչի ընթացքում գործող պատրաստման հավաստագրի առկայությունը պարտադիր չէ:

Հոդված 51. Մաքսային ծառայության կադրերի ռեզերվը

1. Բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրով մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնող մաքսային ծառայողների, մաքսային ծառայության կադրերի ռեզերվում հետագայում ծառայությունը շարունակելու նպատակով գրանցվում են՝

1) սույն օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ ~~և 4.1-ին~~ կետ~~եր~~ով նախատեսված հիմքերով մաքսային ծառայության պաշտոնից ազատված անձինք.

2) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

3) սույն օրենքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի 17-րդ կետով նախատեսված հիմքերով մաքսային ծառայության պաշտոնից ազատված անձինք:

4) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

2. Մաքսային ծառայության կադրերի ռեզերվում մաքսային ծառայողների միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված մաքսային ծառայողի 65 տարին լրանալը:

Մաքսային ծառայության կադրերի ռեզերվում մաքսային ծառայողները գտնվում են մինչև՝

1) սույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասում նշված ժամկետի լրանալը.

2) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարումը.

4) «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված հիմքերի առաջացումը և (կամ) 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելը.

5) մաքսային ծառայության կադրերի ռեզերվից դուրս գալու մասին քաղաքացու դիմումի հիման վրա ~~կոմիտեի ղեկավարի կողմից~~ համապատասխան որոշման ընդունումը.

6) հանրային ծառայության պաշտոնում նշանակվելը:

3. Մաքսային ծառայության կադրերի ռեզերվի վարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով: